



DIGITAL POMEGRANATE



«Ապագան Գյուժրիում Է» միջոցառման մամուլի հաղորդագրություն

Գյուժրի, 33
Մայիսի 10, 2021թ

«Դիջիթըլ Փոմըգրանեթը»՝ Գյուժրիում գործող ամենամեծ SS ընկերությունը մայիսի 15-ին կբացի շարունակաբար աճող թիմի պահանջներին համապատասխան իր նոր գրասենյակների դռները:

Բացմանը զուգահեռ «Դիջիթըլ Փոմըգրանեթը» կհայտարարի իր ամենամեծ նախագծի՝ «Դիստրիկտ» տեխնո թաղամասի մասին, որը դառնալու է քաղաքի կայուն տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը:

Հաշվի առնելով այն փաստը, որ մոտավորապես 100.000 բնակչությամբ փոքր քաղաքներն ամբողջ աշխարհում ամենաշատն են տուժել կորոնավիրուսային համաճարակից՝ նրանց վերափոխումը հետհամաճարակային իրականությունում դարձել է հրամայական: «Դիջիթըլ Փոմըգրանեթի» ղեկավարությունը կարծում է, որ վերածնվող Գյուժրիի լավագույն բնութագրիչները կլինեն հետևյալ հինգ հատկանիշները՝ բարեկեցիկ, ինտեգրված, կանաչ, տեխնոլոգիական և ստեղծարար: Այդ իսկ պատճառով ընկերությունը որոշեց ներդրում անել Գյուժրիի կայուն տնտեսական աճն ապահովող, բարձր տեխնոլոգիաներով հագեցած կանաչ թաղամաս ստեղծելու գաղափարի մեջ:

«Դիստրիկտ» նախաձեռնությունը նպատակ ունի դեպի Գյուժրի բերել երիտասարդ, բարձր որակավորում ունեցող մասնագետներին, որոնց կառաջարկվի աշխույժ ապրելակերպ՝ ժամանցի վայրեր, հասարակական տարածքներ, վաճառքի կետեր, պատկերասրահներ և շատ ավելին: «Դիստրիկտը» նաև կներառի մի շարք ստարտափներ՝ տեղի երիտասարդներին աշխատանք առաջարկելու, նրանց գնողունակությունը բարձրացնելու և հարկեր գեներացնելու համար՝ մեծապես նպաստելով քաղաքի տնտեսության աճին:

«Դիստրիկտ» թաղամասում գործող առաջին ստարտափներն են «Թվային մետաքսի ճանապարհ» (Digital Silk Road) հայ-չինական կենտրոնը, ՏրիվիաՄատիկ (TriviaMatic) մոբայլ և վեբ հավելվածները, Ինգլիշ Բենտո (English Bento) ուսուցման կառավարման համակարգը, Կոմմպրո Փիար Փլեյններ (Commpro PR Planner) հարթակը, ՍիքՅունիք (SeekUnique) վեբկայքի ձևանմուշները առցանց առևտրի համար և ՖարմՖրեշ (FarmFresh) խելացի գյուղատնտեսության տեխնոլոգիան:



Նոր գրասենյակների բացումը և «Դիստրիկտի» հայտարարությունը կարևոր քայլեր են Գյումրին բարեկեցիկ, տեխնոլոգիական, կանաչ քաղաքի վերածելու համար:

Միջոցառման ընթացքում նախատեսվում են մամուլի ասուլիս, մեր նոր շինարարական տեխնոլոգիայի ցուցադրությունը, շրջագայություն նոր գրասենյակներում և աշխատանքային տարածքում, այցելություն «Դիստրիկտ» թաղամասի տարածք, որին կհետևի ճաշի ընդմիջումը և միջոցառման վերջում կլինեն շնորհանդեսներ «Դիջիթալ Փոմըգրանեթ» ընկերության ստարտափների կողմից:

Միջոցառումը կսկսվի ժամը 11:00-ին Գյումրու կենտրոնական հրապարակին կից Աբովյան 248 հասցեում:

Դիստրիկտի և այլ ստարտափների մասին լրացուցիչ ինֆորմացիան կարող եք գտնել հետևյալ վեբ կայքում՝ www.distrikt.am :

«Դիջիթալ Փոմըգրանեթ» ընկերության մասին

Դիջիթալ Փոմըգրանեթը Գյումրիում գործող ծրագրային ապահովման լուծումներ մշակող ընկերություն է: 2013 թվականից՝ իր հիմնադրման օրվանից, ընկերությունը կարևոր դեր է խաղացել Գյումրու վերածննդի գործում: Ընկերության առաքելությունն է հզորացնել Գյումրու տաղանդավոր երիտասարդներին և կանխել/նվազեցնել միգրացիան աշխատատեղերի ստեղծման և մասնագիտական աճի հնարավորությունների միջոցով: Դիջիթալ Փոմըգրանեթը ֆլաթթեր ծրագրավորող առաջատար ընկերությունն է Հայաստանում և համագործակցում է ԱՄՆ-ի, Բրազիլիայի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի ընկերությունների հետ՝ իր ծրագրերն ու ծառայություններն արտահանելով դեպի այդ երկրներ:

Ընկերության կոնտակտային տվյալները

Հասցե՝

Աբովյան 248, Գյումրի, ՀՀ

Հեռ.՝ + (374) 55 050 588

Մանուշակ Թորոյան

Հանրային կապերի պատասխանատու

Հեռ.՝ + (374) 94 346 826

Էլ. հասցե՝ info@digitalpomegranate.com

Վեբկայք՝ www.digitalpomegranate.com

Ֆեյսբուք՝ www.facebook.com/DigitalPomegranate

Ինստագրամ՝ www.instagram.com/digital_pomegranate/

Լինկդին՝ www.linkedin.com/company/digital-pomegranate

